ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) որակի ապահովման վարչությունը 2019 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում իրականացրել է ներքին հսկողություն Տեսչական մարմնի ընթացիկ գործունեության նկատմամբ՝ ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 1358-Ն որոշմամբ սահմանված ուղղություններով.

1) կարգապահական կանոնների ապահովման վերլուծություն,

2) բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն,

3) Տեսչական մարմնի գործունեության արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն:

Իրականացված հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը.

1. Կարգապահական կանոնների ապահովման վերլուծություն գործառույթի շրջանակներում արձանագրվել է հետևյալը.

1) Հաշվետու ժամանակահատվածում նշանակվել և անցկացվել է 1 ծառայողական քննություն՝ Տեսչական մարմնի Երևան քաղաքի տարածքային կենտրոնի պետի կողմից աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու՝ 2019 թվականի նոյեմբերի 21-ին ժամը 9:00-ից 11:00-ն աշխատանքի վայրից բացակայելու դեպքի կապակցությամբ, որի արդյունքում կիրառվել է «նախազգուշացում» կարգապահական տույժը:

2) ՀՀ վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 4-ի N 1601-Ա որոշմամբ ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Էմին Ավետիսյանի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

3) Որակի ապահովման վարչության կողմից իրականացվել է աշխատաժամանակի ռեժիմի պահպանման ուսումնասիրություն, որի արդյունքում հայտնաբերվել են խախտումներ՝

- ուշացումներ,

- ներքին կարգապահական կանոնների համաձայն՝ անձնական նպատակով բացակայության համար սահմանված ժամերի գերազանցում,
- բացակայություններ՝ առանց արձակման թերթիկների,
- անձնական թերթիկների հաշվառման գործընթացի և այլ խախտումներ:

Արձանագրված խախտումների վերաբերյալ գրավոր տեղեկացվել է Տեսչական մարմնի ղեկավարին, նշանակվել է ծառայողական քննություն:

4) Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ 2019 թվականին կիրառված պատասխանատվության միջոցների (տուգանքների) գանձումների գործընթացն ուսումնասիրելու նպատակով: Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են խախտումներ՝ 21 խախտում, որի արդյունքում՝ չգանձված 2 090 000 դրամ գումար:

Որակի ապահովման վարչության կողմից ուսումնասիրվել են հայտնաբերված խախտումների պատճառները: Պարզվել է, որ իրականում առկա է 7 խախտում (մի շարք գործեր տուգանքների որոշումների մասով բողոքարկման ընթացքում են, և դեռևս չեն կայացվել որոշումներ), համապատասխանաբար՝ խախտումների հետևանքով չգանձված գումարը կազմել է 400 000 դրամ:

Պարզվել է, որ նշված 7 դեպքից 1 դեպքում անհետևողականություն է ցուցաբերվել Երևան քաղաքի տարածքային կենտրոնի, 5 դեպքում՝ Արևմտյան տարածքային կենտրոնի կողմից, 1 դեպք Հարավային տարածքային կենտրոնի գործերից է, որի և ևս 18 գործի վերաբերյալ ԴԱՀԿ ներկայացվող գրություններ են պատրաստվել, ուղարկվել են կենտրոնական ապարատ, սակայն ստորագրվել և ԴԱՀԿ է առաքվել 18-ը, իսկ 1 գործին անհասկանալիորեն ընթացք չի տրվել (3-րդ եռամսյակ):

Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են Տեսչական մարմնի ղեկավարին, նշանակվել է ծառայողական քննություն:

5) ԱԳԼՃԿ-ների նկատմամբ հարուցված վարչական վարույթները կարճելուց հետո իրականացվել է դիտարկում, որի ընթացքում պարզվել է, որ Հյուսիսային տարածքային կենտրոնի կողմից հարուցված վարչական վարույթը կարճվել է անհիմն՝ տնտեսավարող սուբյեկտին տրված ոչ բոլոր առաջադրանքներն են

կատարվել: Կազմակերպվել է քննարկում, 2 աշխատակցի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը:

6) Որակի ապահովման վարչության կողմից հայտնաբերվել է, որ Հարավային տարածքային կենտրոնի կողմից հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացված զննման արձանագրության մեջ նշվել է, որ կարգադրագրով տրված առաջադրանքները կատարվել են, սակայն իրականում կատարվել է ոչ թե առաջադրանքը, այլ խնդրին օրենսդրության շրջանակներում տրվել է այլընտրանքային լուծում: Փաստացի՝ զննման արձանագրությունը չի համապատասխանել իրականությանը: Վերջինիս մասին տեղեկացվել է Տեսչական մարմնի ղեկավարին, կազմակերպվել է համատեղ քննարկում, նման դեպքերի հետագա կրկնությունները կանխելու նպատակով տրվել է համապատասխան հանձնարարական:

2. Բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն.

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում իրականացված գործունեության հետ կապված բերվել է 9 **բողոք, որից 3 բողոք՝ Տեսչական մարմին և 6 բողոք՝ դատարան:**

Ոլորտներ	**Բողոքների ընդհանուր թիվ**	**Այդ թվում՝**	
		Տեսչական մարմին	**Դատարան**
Դեղերի շրջանառություն	2	0	2
Բժշկական սպասարկում	0	0	0
Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում	7	3	4
Աշխատողների առողջության պահպանում և անվտանգության ապահովում	0	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	**9**	**3**	**6**



Տեսչական մարմնի դեմ բերված 3 բողոքն առնչվում է 4-րդ եռամսյակում ընդունված տուգանքի որոշումներին:

Դատական կարգով ներկայացված 6 բողոքներից 2-ն առնչվում է 2-րդ, 2-ը՝ 3-րդ և 2-ը՝ 4-րդ եռամսյակում ընդունված տուգանքի որոշումներին:

Արձանագրվել է բողոքների թվի նվազում նախորդ հաշվետու ժամանակահատվածի համեմատությամբ, երբ Տեսչական մարմնի դեմ բերվել էր 19 բողոք:

Բողոքների քանակը հետևյալն է՝ ըստ առանձին ոլորտների և եռամսյակների.



Տեսչական մարմին ներկայացված 1 բողոքի դեպքում բողոքարկվող որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել նոր քննության, 1 բողոք բավարարվել է՝ բողոքարկվող որոշումը բեկանվել է և գործը կարճվել, 1 բողոքի քննումն ընթացքում է:

3-րդ եռամսյակի ընթացքում բողոքարկված 1 բողոքի վերաբերյալ այս հաշվետու ժամանակահատվածում կայացվել է որոշում՝ բողոքը մերժվել է:

Տեսչական մարմնի դեմ դատական կարգով ներկայացված բողոքները դեռևս քննության ընթացքում են:

Տեսչական մարմնի դեմ նախորդ հաշվետու ժամանակահատվածներում դատական կարգով բողոքարկված գործերի վերաբերյալ 4-րդ եռամսյակում ընդունվել է 5 որոշում, որից 4 բողոք մերժվել է, իսկ 1 բողոք բավարարվել է:

Խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին»:

Տեսչական մարմին ներկայացված բողոքների հիման վրա հարուցված բողոքարկման վարույթների գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, 1 բողոքի դեպքում բողոքաբերը պատշաճ չի ծանուցվել գործի քննության վերաբերյալ, հետևաբար՝ չի կարողացել ներկա գտնվել և իրացնել իր իրավունքները, արդյունքում՝ բողոքարկվող որոշումը բեկանվել է և ուղարկվել նոր քննության: Տեսչական մարմնում պարբերաբար արձանագրվում է նշված խնդիրը՝ գործի քննությունն անցկացվում է պատասխանատվության ենթարկվող անձի բացակայությամբ՝ առանց գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ տվյալների:

Դատական կարգով բողոքարկված 1 բողոք բավարարվել է (դեղերի շրջանառության ոլորտ), քանի որ վարչական վարույթն իրականացվել և

պատասխանատվության միջոցը կիրառվել է օրենսդրությամբ սահմանված երկամսյա ժամկետի անցած լինելու պայմաններում: Ըստ դատարանի՝ Տեսչական մարմինը չէր կարող հարուցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ և հարուցված վարչական վարույթն էլ ենթակա էր կարճման:

3. Տեսչական մարմնի գործունեության արդյունքների ուսումնասիրում և վերլուծություն գործառույթի շրջանակներում իրականացված հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը.

3.1 Ներքին և արտաքին կանոնակարգումներ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները՝ Խորհրդի կողմից հաստատվել են հետևյալ իրավական ակտերը.

1) «Հանրությունից ստացվող բողոքների ընդունման և դրանց հետագա ընթացք տալու կարգը»,

2) 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը,

3) Տեսչական մարմնի գործունեության 2020 թվականի տարեկան ծրագիրը, այդ թվում՝ կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագիրը,

4) 2020 թվականի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հանրային քննարկման են դրվել նաև ոլորտային 8 ստուգաթերթի նախագծեր:

3.2 Վերահսկողություն.

Վարչական վարույթների առանձին գործերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է հետևյալը:

Խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը.

- բողոքում բարձրացված հարցերի, հարուցված վարչական վարույթի նպատակի և իրականացված գործողությունների անհամապատասխանություն,
- վարչական վարույթ հարուցելու և զննում իրականացնելու մասին հրամանում չներառված օրենսդրական պահանջների պահպանումը պարզաբանելու դեպքեր,
- վերահսկման ոլորտին առնչվող խնդիրների պարզաբանման նպատակով աշխատանքային խմբում ընդգրկվել են համապատասխան մասնագետներ, սակայն

վերջիններս չեն մասնակցել զննմանը, և խնդրահարույց հարցերի պարզաբանում չի կատարվել,

- վերահսկողություն անհատական իրավական ակտերի պահանջների նկատմամբ, մինչդեռ Տեսչական մարմինը լիազորված է վերահսկողություն իրականացնել օրենքների և դրանց համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների նկատմամբ,

- կարևոր և կրկնվող խախտումներից են լաբորատոր հետազոտությունների նպատակով անհիմն նմուշառման դեպքերը, որոնք չունեն մասնագիտական հիմնավորում, չեն բխում վարչական վարույթի նպատակից և լրացուցիչ ֆինանսական բեռ են:

Նշված խախտումը պարբերաբար կատարվում է Երևան քաղաքի տարածքային կենտրոնի կողմից:

Մասնավորապես՝ վիրուսային հեպատիտ Բ-ին և Ց-ին, ՄԻԱՎ-ին առնչվող վարչական վարույթների դեպքում իրականացվում է օդի նմուշառում և մանրէաբանական հետազոտություն, և/կամ արտաքին մակերեսներից վերցված լվացուկների մակաբուծաբանական հետազոտություններ:

- ոլորտին չառնչվող մասնագետների ներառում վարչական վարույթում (դեպքերն արձանագրվել են եռամսյակի սկզբում, հարցը քննարկվել է Տեսչական մարմնի ղեկավարի հետ, ընթացիկ գործերում առկա չէ նշված խախտումը),

- վարչական վարույթի ծավալին ոչ համարժեք կադրային ներուժի հատկացում (օրինակ՝ 1 անուն դեղի առանց դեղատոմսի վաճառքի դեպք, ընդգրկվել է 3 մասնագետ),

- կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով հարուցված վարչական վարույթի շրջանակներում կազմված զննման արձանագրությունում բացակայում են փաստեր նախկինում տրված որոշ առաջադրանքների կատարման վերաբերյալ (ԱԳԼՃԿ-ների վարչական վարույթներ),

- վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով վարչական վարույթը կարճելու մասին որոշում, սակայն գործում փաստաթղթային ապացույցներ չկան,

- վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով վարչական վարույթը կարճելու մասին որոշում, սակայն համաձայն զննման արձանագրության առկա է խախտում,

- ժամանակային իրարամերժ տարբերություն զննման հրամանի և ծանուցման միջև (ծանուցումն ավելի վաղ ամսաթվով է, քան հարուցման/զննման հրամանի ամսաթիվը),

- հարուցված վարչական վարույթը կարճելու մասին որոշումը պատշաճ ծանուցված չէ վարույթի մասնակիցներին (եռօրյա ժամկետի խախտում),

- վարչական վարույթ հարուցելիս նշանակված զննման ժամկետը ողջամիտ չէ,

- խմելու ջրի նմուշառման և լաբորատոր հետազոտություններ իրականացնելու համար ոչ լիարժեք հայտ (չեն նշվել որոշ անհրաժեշտ հետազոտություններ՝ կոլիֆորմ ախտածին մանրէների և/կամ աղիքային վիրուսների հայտնաբերման, մնացորդային քլորի որոշման համար),

- դեռևս հանդիպող անփութություն՝ նույն գործի տարբեր փաստաթղթերում ժամկետների, ամսաթվերի, նորմատիվ իրավական ակտերի հղումների հետ կապված անճշտություններ և այլն:

3.3 Կանխարգելիչ գործունեություն.

Հաշվետու ժամանակահատվածի վերջում սկսել է գործարկվել Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջը:

Խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը.

Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական ստորաբաժանումները դեռևս պատշաճ չեն հետևում վերահսկողության ոլորտներին առնչվող նոր ընդունված իրավական ակտերի հրապարակմանը՝ օրենքով սահմանված կարգով տնտեսավարող սուբյեկտներին իրազեկելու նպատակով:

4. Կադրային համալրում.

2019 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ Տեսչական մարմնի հաստիքացուցակում առկա 280 հաստիքից համալրված է 213 հաստիք: Համալրվածությունը կազմում է 76,1%, որը 5%-ով ավելին է եռամսյակի սկզբի համեմատությամբ:

Եռամսյակի ընթացքում աշխատանքի է ընդունվել 36, աշխատանքից ազատվել է 19 անձ, որոնցից 12 անձ փաստացի Տեսչական մարմնի ներսում տեղափոխվել է այլ պաշտոնի:

Նախորդ եռամսյակի հաշվետվությամբ ներկայացված՝ կադրային համալրման տեսանկյունից առավել խնդրահարույց՝ Արևելյան տարածքային կենտրոնի դեղերի շրջանառության և բժշկական սպասարկման վերահսկողության բաժիններն արդեն իսկ մասամբ համալրվել են, այս պահին կենտրոնում ոլորտային աշխատանքները հնարավոր է ապահովել առկա ներուժով և այլ ոլորտի մասնագետ չընդգրկել:

Խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը.

- դեռևս խնդրահարույց է Մեղրիի ՍԲՀԿ-ի համալրումը բժիշկ-համաճարակաբաններով: Քանի որ նշված մասնագետների խնդիր կա, նոր հաստիքացուցակով բժիշկ-համաճարակաբանների հաստիքները փոխարինվել են համաճարակաբանի օգնականների հաստիքներով:

5. Տեխնիկական հագեցվածություն.

Հաշվետու ժամանակահատվածում լուրջ աշխատանքներ են տարվել Տեսչական մարմնում տեխնիկական, մասնավորապես՝ համակարգիչներով հագեցվածությունն ապահովելու ուղղությամբ:

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի N 1520-Ն որոշման համաձայն՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Տեսչական մարմնի կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով հատկացվել է 37964,0 հազ. դրամ: Այդ միջոցներով արդեն իսկ ձեռք են բերվել համակարգիչներ, տպիչներ, հեռախոսներ, անհրաժեշտ այլ գույք: Ամբողջական տեխնիկական և գույքային հագեցվածության ապահովումը նախատեսվում է ավարտել 2020 թվականի ընթացքում: